Պատմություն



ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԶԵՆՔԵՐ)

Հ. Ավետիսյան,
Ն. Ավետիսյան

Ուրարտական մետաղագործությունը[1] յուրահատուկ տեղ է գրավում առաջավոր ասիական երկրներում: Որոշ մասնագետների կարծիքով ունենալով խիստ զարգացած բրոնզե արտադրություն, լայնորեն օգտագործում էին նաև երկաթը: Ուրարտական բարձրորակ արտադրանքը արտահանվել է դեպի հյուսիս՝ Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, հարավ՝ Սիրիա, Միջագետք, արևելք՝ Իրան և դեպի արևմուտք՝ մինչև Էգեյան ծով և Էտրուրիա: Վանի թագավորության մետաղագործության բարձր զարգացման մասին հիշատակվում է Սարգոն 2-րդի տեքստերում: Նա Մուսասիրում գրավել է 2 տոննա ոսկի, 5 տոննա արծաթ և ավելի քան 100 տոննա պղնձե իրեր: Մետաղագործության աննախադեպ զարգացմանը նպաստում էին հարուստ հանքային պաշարները: Հատկապես երկաթի հանքավայրերը, կենտրոնացված էին Վանի, Մուշի, Բիթլիսի, Ուրմիա լճի շրջաններում: Մեծ պաշարներով պղնձի, անագի, կապարի հանքեր կան Վանի, Կորդուքի, Էրզրումի, Վերին Տիգրիսի, Ուրմիայի, Մուսասիրի, Կողբի, Սյունիքի մարզերում:

Տնտեսության և արհեստագործական արտադրության մեջ մետաղյա աշխատանքային գործիքները կազմում են առանձին խումբ: Հատկապես հետաքրքիր են երկրագործական աշխատանքային գործիքները: Թոփրակ կալեի և Կարմիր բլուրի պեղումներից գտնվել են երկաթե խոփեր: Դրանք ունեն միևնույն ձևը՝ լայն բահանման վարող մաս արորի փայտե մասին միացնելու համար վերևում լայն անցք:

Երկրագործական գործիքների մեջ աչքի են ընկնում երկժանի և եռաժանի երկաթե եղանները: Գտածոները բավականին մեծ են և ունեն խողովակաձև ելուստ՝ փայտե բռնակը ամրացնելու համար: Չնայած այդ եղանները գտնվել են տարբեր հուշարձաններից (Թոփրակ կալե, Կարմիր բլուր), և ունեցել են լայն տարածում, այնուամենայնիվ նույն ձևերի են և տարբերվել են միայն իրենց չափսերով: Ամենատարածված երկրագործական հայտնի գործիքների թվին են պատկանում, մի քանի տասնյակ օրինակներով, Թոփրակ կալեից, Արգիշտիխինիլիից, Կարմիր բլուրից, Արագածից գտնված երկաթե մանգաղները: Դրանք բոլորն էլ միատեսակ են, ունեն ա-

[1] **Б. Б. Пиотровский,** Ванское царство, Москва, 1959, стр. 161.

ղեղնաձև տեսք, տափակ մեջք և փոքրիկ պոչուկ՝ փայտե բռնակին ամրացնելու համար[1]*:*

Գործիքների հաջորդ խումբը երկաթե բահերն են, որոնք ունեն ոչ մեծ կլորավուն սայր և խողովակաձև լայն կոթառ՝ փայտե պոչերին ամրացնելու համար: Նման գործիքներ հայտնի են Թոփրակ կալեից, Արգիշտիխինիլիից և Կարմիր բլուրից: Հետաքրքիր է, որ Կարմիր բլուրի պեղումների ընթացքում սենյակներից մեկում 8 մետր խորության վրա գտնվեցին 7 բահ: Գտնվածները ոչնչով չեն տարբերվում ժամանակակից, այսպես կոչված փորող մեծ բահերից: Անկասկած, դրանք տեղական արտադրության բահեր էին, որոնք օգտագործվել էին սկյութների կողմից հրդեհվող ավերակներում գանձ որոնելիս[2]*:*

Բացի երկրագործական գործիքներից Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից գտնվել են երկաթե տարբեր ձևերի մուրճեր: Դրանք բոլորն էլ ունեն անցքեր՝ փայտե բռնակին ամրացնելու համար: Մուրճերը քայքայված են և բաժանվում են երեք տիպի: Առաջին երկու տիպի մուրճերի բռնակի անցքերը տեղադրված են կենտրոնում: Դրանց մի մասի աշխատանքային կողերը տափակ են, իսկ մյուսների մի կողմը հարթ է, մյուսը՝ սրածայր, ինչը հնարավորություն է տալիս և՛ հարթեցնելու և՛ տաշելու քարը: Երրորդ տիպի մուրճերի բռնակների անցքերը կենտրոնում չեն: Աշխատանքային ծայրերը բարակ են և լայն: Այս տիպի մուրճերը օգտագործվել են միայն տաշելու համար:

Քարտաշի գործիք են հանդիսացել Արգիշտիխինիլիի համալիրներից գտնված երկաթե խոշոր հատիչները: Դրանք իրենցից ներկայացնում են երկար մետաղյա ձողեր, որոնց վերին հատվածները մուրճերի հաճախակի հարվածներից տափակացվել են[3]*:*

Ավելի տարածված են փայտամշակման գործիքները: Դրանց թվին են պատկանում Կարմիր բլուրում գտնված երկաթե ոչ մեծ սղոցները, որոնք օգտագործվում էին նաև նուրբ փայտե և ոսկրե իրեր պատրաստելու ժամանակ: Գործիքների թվին են պատկանում երկաթե տարբեր ձևերի դանակները, որոնք լայնորեն կիրառվում էին նաև կենցաղում: Թոփրակ կալեում, Արգիշտիխինիլիում, Էրեբունիում, Կարմիր բլուրում, Արագածում, Արամուսում գտնված դանակները բաժանվում են մի քանի տիպերի: Դրանց մեջ կան նաև շատ մեծ վարպետությամբ պատրաստված նրբին օրինակներ:

[1] **Б. Б. Пиотровский**, История и культура Урарту, Ереван, 1944, стр.197.
[2] **Ս. Ա. Եսայան**, Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 32:
[3] **А. А. Мартиросян**, Аргиштихинили, Ереван, 1974, стр. 150, рис. 86.

Փայտամշակման գործիքների թվին են պատկանում ուրարտական հուշարձաններում լայնորեն տարածված երկաթե տաշուրագ-կացինները: Դրանք ունեն ուղիղ կամ փոքր-ինչ լայնացող սայրեր և հարվածային մաս: Փայտամշակման մեջ օգտագործվող կացինները նույնպես վերաբերում են հիմնական գործիքների թվին: Դրանցից երկուսը գտնվել են Կարմիր բլուրից, որոնք ունեն կարճ, սեպաձև տեսք, վերին հատվածում կա նեղ անցք՝ կոթառի համար: Կացինները օգտագործվել են հիմնականում ոչ թե փայտ հատելու, այլ գերաններ ճղելու համար: Նման օգտագործման կացինները, որոնցով թշնամիները քանդում էին ուրարտական ամրոցների պարիսպները, հայտնի են ասուրական նյութերում: Փայտամշակման գործիքների թվին են պատկանում Արգիշտիխինիլիից և Օշականից գտնված բրոնզե սեպերը, որոնք օգտագործվել են գերանից տախտակ ստանալու համար: Վանի թագավորության քաղաքների և բնակավայրերի արհեստանոցներում լայնորեն օգտագործվել են տարբեր չափերի երկաթե և բրոնզե գամեր, դռան օղակաձև փականներ: Դրանք մեծ քանակությամբ հայտնի են Թոփրակ կալեից, Արգիշտիխինիլիից և հատկապես՝ Կարմիր բլուրից: Հետաքրքիր է Կարմիր բլուրում № 11 կացարանից գտնված բրոնզե դռան փականի վրա պահպանված «Ռուսա Արգիշտի որդի Թեյշեբաինի քաղաքի ամրոցը» սեպագիր արձանագրությունը[1]*: Գտնվել են նաև կողպեքներ, բրոնզե ոչ մեծ հելուններ, խոշոր ասեղներ և այլ տեսակի գործիքներ*[2]*: Արգիշտիխինիլիից գտնվել են երկաթե փոքրիկ գդալներ, որոնք օգտագործվել են դեղորայք և անուշահոտ օծանելիք պատրաստելու համար:*

Մետաղամշակությունը լայնորեն խթանեց նաև արտադրությունը:

Ուրարտական հարձակողական զենքը կազմված էր տարբեր ձևերի նիզակներից, դաշույններից, թրերից, կացիններից, գուրզերից, նետասլաքներից, որոնց գերակշռող մասը պատրաստված են երկաթից, բրոնզից:

ՆԻԶԱԿՆԵՐ և ուրարտական երկաթե նիզակները հայտնի են մեծ թվով և իրենց ձևով բաժանվում են մի քանի տիպի: Դրանք խոշոր, խողովակաձև կոթառով, տերևաձև նիզակներ են: Կոթառների մի մասը ունի փակ խողովակի ձև, մյուսների վրա կան երկայնակի կտրվածքներ, շեղբի կենտրոնով անցնում է ուռուցիկ միջանկյալ ող: Նման նիզակներ հայտնի են Երևանի բիայնական դամբարանից, Իգդիրից, Կարմիր բլուրից, Էրեբունուց, Այանիսից, Արգիշտիխինիլիից, Ալթին թեփեից և այլն:

ԴԱՇՈՒՅՆՆԵՐ - ուրարտական դաշույնները աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և բաժանվում են մի քանի խմբի: Ներկայացված են

[1] **Ս. Ա. Եսայան**, Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ15:
[2] **Հ. Գ. Ավետիսյան, Պ. Ս. Ավետիսյան**, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա XI-VI դարերում, Երևան, 2006, էջ 135-139:

Արգիշտիխինիլիից, Երևանի բիայնական դամբարանից, Կարմիր բլուրից և Արևմտյան Հայաստանից: Գտնված երկաթե և բրոնզե դաշույնները ունեն կլորավուն ուսեր և դեպի սայրը նեղացող շեղբ, կարճ կամ երկար լեզվակ՝ բռնակը ամրացնելու համար: Դաշույնների այս ձևը նրանց նմանեցնում է այսպես կոչված առաջավորասիական դաշույնների տիպին, որոնք Հայաստանում հանդես գալով դեռ միջին բրոնզե դարից հարատևում են մինչև մ.թ.ա. 8-րդ դարը:

ԹՐԵՐ - Թրերը ուրարտական հուշարձաններում համեմատաբար քիչ են հայտնաբերվել: Դրանք իրենց ձևերով բաժանվում են մի քանի տիպի: Առաջին տիպին է վերաբերում Կարմիր բլուրից գտնված թուրը: Այն ունի երկար, լայն, դեպի սայրը նեղացող շեղբ, նրա կենտրոնը լայնանում է, իսկ եզրերը օժտված են ոչ բարձր եզրերով: Դաստակի ձևը հնարավորություն է տալիս, ինչպես և վերը նկարագրված դաշույնները, դասել առաջավորասիական թրերի տիպին:

Երկրորդ տիպի թուրը գտնվել է Երևանի բիայնական դամբարանում: Այն ունի երկար (80 սմ) դեպի սայրը նեղացող շեղբ, որը ամբողջ երկարությամբ զարդարված է երեք ոչ խորը ակոսներով: Ցավոք, նրա դաստակը չի պահպանվել և կարելի է ենթադրել, որ այն այստեղ գտնված դաշույններից մեկի նման ունեցել է լեզվակ՝ բռնակին ամրացնելու համար:

Երրորդ տիպի թուրը հայտնի է Թեյշեբաինից: Այն ունի երկար, նեղ, դեպի սայրը նեղացող շեղբ և կլորավուն բռնակ, որը ավարտվում է կլորավուն գլխիկով, իսկ ստորին մասը զարդարված է բրոնզե պահունակներով: Նման թրեր հայտնի են Մուսիերիում, Ակներում և մեկ օրինակ կա Վրաստանի թանգարանում[1]: Հետաքրքիր է, որ նման թուր փորագրված է Վանում գտնված քարե արձանի վրա, որն այժմ պահվում է Վրաստանի թանգարանում:

ԵՐԿԱԹԵ ԿԱՑԻՆՆԵՐԸ ներկայացված են ոչ մեծ քանակով: Դրանցից երկուսը հայտնի են Կարմիր բլուրից: Այս կացիններից մեկը մարտական է, ունի նեղ, երկար իրան կլորավուն հարվածային մասով և կլոր կոթառ (երկարությունը 14 սմ): Իր ձևով այս կացինը շատ նման է Կարմիր բլուրում գտնված Թեյշեբա աստծո բրոնզե արձանի ձեռքում պատկերված մարտական կացնին: Երկրորդ կացինը նույնպես ունի 14 սմ երկարություն: Այն ունի սեպաձև տեսք, որի վերին մասում կա կոթառի համար արված ոչ մեծ անցք: Ինչպես երևում է նկարագրությունից այս կացինը խիստ տարբերվում է առաջինից և իրենից ներկայացնում է հատող ծանր գործիք, սա-

[1] **С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян. А. Г. Канецян**, Биайнская гробница в Ереване, Ереван, 1991, таб. X, рис.1.

կայն ինչպես բոլոր կացինները, այնպես էլ մյուսները կարող էին օգտագործվել նաև իբրև զենք: Այս տիպի կացինները պատկերված են խեթական բարձրաքանդակներում: Հետաքրքիր է, որ ասորական պատկերների վրա նման կացիններով սակրավորները կտրում են ամրոցները շրջապատող ծառերը:

Երկաթե կացիններ գտնվել են նաև Իգդիրի դամբարանադաշտում, սակայն դրանք խիստ քայքայված են, ինչը հնարավորություն չի տալիս դրանց դասակարգել համապատասխան տիպերի:

ՆԵՏԱՍԼԱՔՆԵՐ - առավել հաճախակի են հանդիպում ուրարտական հուշարձաններում և հանդիսանում են հիմնական զենքերից մեկը: Չնայած ուրարտական աղեղները չեն պահպանվել, բայց դրանց պատկերները կան բազմաթիվ բրոնզե գոտիների վրա տարբեր տեսարաններում: Վանից գտնված քարե քանդակի վրա նույնպես արված է նման պատկերագրություն:

Նետասլաքները պահվում էին փայտե և բրոնզե կապարճներում: Փայտե մեկ կապարճ գտնվել է Կարմիր բլուրում: Բրոնզե անզարդ և չքեղ պատկերներով կապարճներ հայտնի են Թոփրակ կալեում, Ալթին Թեփեում, Հայկաբերդում, Կայալիդերեում, հատկապես շատ են Կարմիր բլուրում: Այստեղ գտնված 13 բրոնզե կապարճներում տեղադրված էին 30-35 երկաթե նետասլաքներ: Այս կապարճները իրենցից ներկայացնում են 70 սմ երկարություն և 10 սմ տրամագիծ ունեցող մեկ կողմը չմիացած խողովակներ, որոնց վերին և ստորին մասերում ամրացված են օղակներ: Դրանց միջով անցնում է ուսին գցելու գոտին: Խողովակի բաց հատվածը փակվում էր կաշվով՝ կրողների ուսերը չվնասելու համար: Այս կապարճներից շատերը չքեղ զարդարված են: Այսպես, մի բեկորի վրա պահպանվել էին ցուլերի հետին ոտքերի պատկերները և պոչը: Ետևից քայլում է մի առասպելական կենդանի, որի առաջին մասը պատկերում էր առյուծի, իսկ հետինը՝ ցուլի, ուրիշների վրա պատկերված են քայլող ցուլեր և առյուծներ: Ուրիշ այլ կապարճներ զարդարված էին մարտակառքերի և հեծյալների դրվագված պատկերներով: Հեծյալները կրում են սաղավարտներ, ոչ մեծ կլոր վահաններ և նիզակներ: Մարտակառքերի թափքերում կանգնած են երկու հոգի, առանց մորուքի կառապանը, մյուսը՝ մորուքավոր զինվորը: Հինգ կապարճների վրա պահպանվել են Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի սեպագիր արձանագրությունները: Ուրարտական նետասլաքները տասնյակներով հայտնի են Թոփրակ կալեից, Էրեբունիից, Արգիշտիխինիլիից, Ալթին Թեփեից, Հայկաբերդից, Կայալի դերեից, Կարմիր բլուրից, Իգդիրից, Եղեգնաձորից, Օշականից, Արամուսից, Արագածից և այլ հուշարձաններից: Ուրարտական նետասլաքները հիմնականում պատրաստվում էին երկաթից, սակայն հայտնի են նաև բրոնզե նետասլաքներ: Երկաթե նետասլաքների

մեծ մասը ունեն տերևաձև գլխիկ և երկար պոչուկ՝ փայտին ամրացնելու համար: Որոշ նետասլաքների պոչուկների վերին հատվածում կա փոքրիկ խնձորակ, մյուսների մոտ այն բացակայում է: Բացի տերևաձև նետասլաքներից հանդիպում են նշաձև գլխիկներ ունեցող նետասլաքներ[1]: Բրոնզե նետասլաքները երկու տիպի են: Դրանք ունեն խոշոր տերևաձև գլխիկ և երկար պոչուկ: Գլխիկի ծայրերից հեռանում են կարճ սրածայր ճանկեր, իսկ պոչուկի վերին հատվածում կա ոչ մեծ խնձորակ: Նման նետասլաքներ հայտնի են Հայկաբերդից, Կայալի դերից, Արգիշտիխինիլիից, Կարմիր բլուրից և այլ վայրերից: Հայկաբերդում նման մի նետասլաքի վրա պահպանվել են «Խալդի աստծոն (տիրակալին) նվիրեց» արձանագրությունը: Կարմիր բլուրում երեք նման նետասլաքների վրա պահպանվել էր «Խալդի աստծոն տիրակալին Սարդուրին նվիրեց» սեպագրերը:

ԳՈՒՐԶԵՐԸ ևս հանդիսանում են տարածված զինատեսակներից մեկը: Դրանք լայն տարածում ունեն, սակայն ուրարտական հուշարձաններում եզակի են հանդիպում: Մեկ գուրզ հայտնի է Կարմիր բլուրից: Այն ունի տափակացված գնդաձև տեսք: Գուրզ է պատկերված նաև Կարմիր բլուրում գտնված պատերազմի աստված Թեյշեբայի բրոնզե արձանի ձեռքին: Գուրզը ունի սկավառակաձև տեսք:

Ինչպես երևում է ասորական բարձրաքանդակներից, բանակում գուրզերով հիմնականում զինված են եղել թեթև հետևակի զինվորները՝ նիզակակիրները և նետաձիգները:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԶՐԱՀԸ ԵՎ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ կազմված է եղել մի քանի տեսակներից: Դատելով Բալավատյան դարպասների վրա եղած պատկերներից, ուրարտական Արամե թագավորի զինվորները հանդես են գալիս երկար, մինչև ծնկները հասնող գոտեկապ վերնաշապիկներով: Գլխներին կան կատարավոր սաղավարտներ, ձեռքերին փոքրիկ վահաններ: Զինված են նաև կարճ թրերով և նետ ու աղեղով: Այս նկարագրությունից հասկանալի է դառնում, որ բարձրաքանդակում պատկերված են թեթև հետևակի մարտիկները: Հնագիտական պեղումների նյութերը հնարավորություն են տալիս վերլուծել նաև ծանր հետևակի սպառազինությունը, որը բացի վերը նկարագրվածից կազմված էր նաև տարբեր տիպի զրահաշապիկներից, խոշոր մարտական վահաններից և բրոնզե գոտիներից:

ՎԱՀԱՆՆԵՐԸ և ուրարտական վահանների ամենավաղ ձևերը պատկերված են վերը նշված Արամե թագավորի զինվորների ձեռքերին: Դրանք կլոր են, ունեն ոչ բարձր եզրեր և դուրս ցցված կենտրոնական մաս: Դատելով բռնելու ձևից, այդ վահանները ներսի կողմից ունեցել են մեկ խոշոր բռնակ: Վահանների նման կիրառումը հիշեցնում է խեթական վահանները: Այս ձևը պահպանվում է նաև հետագայում, ինչը հաստատվում է մ.թ.ա. 8-7-րդ դարերով թվագրվող Ուրարտուի կենտրոնական մարզերում գտնված և Մայնցի թանգարանում պահվող խոշոր, կլոր վահանի գյուտով, որը ներսի կողմից ունի միայն մեկ բռնակ: Հավանաբար նման ձև ունեն նաև հեծյալների կողմից օգտագործվող վահանները, որոնց պատկերները հայտնի են տարբեր վայրերից գտնված սաղավարտների, կապարճների, բրոնզե գոտիների վրա եղած տեսարաններում: Մեզ հասած ուրարտական վահանները կազմված են երկու խմբից՝ մարտական և նվիրատվական-դեկորատիվ՝ զարդարված չքեղ պատկերներով: Առաջին խմբի վահանները, ըստ երևույթին, եղել են փայտե կամ ճյուղերից գործված և կաշվեպատ: Դրանց կենտրոնում ամրացվում էին բրոնզե կոնաձև ելուստներ (ումբոններ): Դրանց ստորին մասը փոքր-ինչ կորացված էր և ուներ բազմաթիվ անցքեր՝ վահաններին գամերով ամրացնելու համար: Մի այդպիսի մարտական վահանի մնացորդներ հայտնի է Արգիշտիխինիլիի պեղումներից:

Ինչ վերաբերում է ումբոններին, ապա նրանք հայտնի են Կարմիր բլուրից, որոնցից շատերի վրա կան Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի արձանագրությունները: Վերջին տարիներին բազմաթիվ ումբոններ գտնվել են Ուրարտուի կենտրոնական մարզերում և պահվում են տարբեր թանգարաններում՝ Բազել, Լես Արս, Մյունխեն: Բացի մարտական վահաններից, Ուրարտուում լայնորեն տարածված էին բրոնզե վահաններ, որոնք նվիրվում էին տարբեր քաղաքների և տաճարների: Այսպիսի երկու մեկ մետրանոց բրոնզե անզարդ վահաններ գտնվել են Կարմիր բլուրում: Ըստ մեկի վրա եղած արձանագրության՝ «Խալդի աստծուն տիրակալին այս վահանը Արգիշտին Մենուայի որդին նվիրեց» պարզվում է, որ այս վահանները պատկանում են նվիրատվական վահանների թվին: Մեկ այլ նման վահան գտնվել է Կայալի դերեում և մեկ այլ օրինակ, մասամբ զարդարված՝ Ալթին թեփեում: Բացի անզարդ վահաններից, Ուրարտուում լայնորեն օգտագործվել են չքեղ ձևավորվածները: Այս տեսակետից բացառիկ արժեքավոր է Սարգոն 2-րդի հաղորդումը[1], որ նա Մուսասիրում այլ ավարի հետ գրավել է 6 ոսկե վահան, որոնցից յուրաքանչյուրը կշռում էր մոտ 6,5 կգ: Այդ վահանների կենտրոնական ելուստները ունեցել են երախները բաց շան գլուխների տեսք: Սարգոն-2րդ գրավել էր նաև 12 ծանր արծաթե վահան, որոնց ումբոնները հրեշների գլուխների, առյուծների, վայրի

[1] **С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян,** Биайнская гробница в Ереване, Ереван 1991, таб. X, рис. 8-9.

[1] **Ս. Ա. Եսայան,** Կառամարտիկ զորամասերը և հեծելազորը Հին Հայաստանում, Երևան, 1994, էջ. 47:

ցուլերի ձև են ունեցել: Բացի դրանցից 25212 բրոնզե ծանր և թեթև վահաններ թալանվել են զինվորների կողմից:

Ավելի շքեղ զարդարված վահաններ հայտնի են նաև ուրարտական ամրոցների պեղումներից: Սրանք չէին կարող օգտագործվել մարտում և ունեին միայն գեղարվեստական նշանակություն, զարդարելով պալատների և տաճարների պատերը: Այսպես, Կարմիր բլուրում[1] գտնվել է 14 վահան, որոնք ունեն մ.թ.ա. 8-րդ դարի թագավորների արձանագրություններ (գերազանցապես Արգիշտի 1-ինի): Առանձնապես հետաքրքիր են Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի վահանները՝ գտնված 1951 և 1953 թ.թ.: Արգիշտի 1-ինի վահանի կենտրոնական կոնաձև ելուստը բաժանված է երեք համակենտրոն գոտիների, որոնցից վերինում տեղադրված են 28 առյուծների ուռուցիկ պատկերներ, միջինում 20 ցուլ, իսկ ներքին թմբուկին հարող գոտում՝ 8 առյուծ: Կոնաձև ելուստի գագաթը զարդարված է 38 ծաղկաթերթանի վարդյակով: Սարդուրի 2-րդի վահանի վրա ավելի քիչ կենդանիներ են պատկերված, նրա վերին գոտում տեղադրված են 24 առյուծների ֆիգուր, կենտրոնականում 16 ցուլերի, իսկ ներքևում 6 առյուծների պատկերներ: Նման վահանների բեկորներ գտնվել են Թուփրակ կալեում, Այանիսում, Վերին Անդաֆում: Վերջինս երկաթից է և զարդարվեստի բացառիկ նմուշ է հանդիսանում:

Պատկերված է Աստվածների երթարշավի պատկերով, Խալդիի գլխավորությամբ:

ՍԱՂԱՎԱՐՏՆԵՐ - Ուրարտական սաղավարտները իրենց ձևով բաժանվում են երկու խմբի՝ կատարավոր և սրածայր :

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՍԱՂԱՎԱՐՏՆԵՐԸ - բնորոշ են վաղ ժամանակաշրջանի համար: Դրանցից ամենահին ձևերը պահպանվել են վերը հիշատակված Արամեի զինվորների գլուխներին պատկերված սաղավարտներով: Սաղավարտները ունեն դեպի վեր նեղացող տեսք, որոնց գագաթները զարդարված են նեղ, կլորավուն կատար հիշեցնող ելուստներով: Փոքր-ինչ այլ ձև ունի Էրեբունիի որմնանկարներից մի բեկորի վրա պահպանված սաղավարտը: Այն ունենալով նույն տեսքը, տարբերվում է կատարի ձևով, որի նեղ ելուստը եղջյուրի նման կախվում է սաղավարտի ճակատային մասի վրա: Չնայած այս պատկերը գտնվել է մ.թ.ա. 8-րդ դարի հուշարձանում, այն ըստ երևույթին ընդօրինակված է Վանում եղած հին պատկերներից, քանի որ Էրեբունիի հիմնադիր Արգիշտի 1-ինի հետ առնչվող բոլոր սաղավարտները սրածայր են:

[1] **Б. Б. Пиотровский**, Ванское царство, Москва, 1959, стр.168.

Բացի պատկերներից Արևմտյան Հայաստանում պատահական գտածոների թվին է պատկանում Իշպուինիի արձանագրությամբ մի սաղավարտ, որը պահվում է Մայնցի թանգարանում: Այն իրենից ներկայացնում է լայն փողաձև սաղավարտ, որի վերին ծայրը նեղացող է և պատված է ճակատի վրա կախված նեղ կատարով: Սաղավարտի պարանոցը զարդարված է չորս ուռուցիկ գծերով: Այս երեք սաղավարտների ձևերը, չնայած որոշ ոճական տարբերությունների, պատկանում են միևնույն մշակութային շրջանին:

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՍԱՂԱՎԱՐՏՆԵՐԸ - հանդես են գալիս մ.թ.ա. 9-րդ դարի վերջին և 8-րդ դարի սկզբին և կրում են ասորական սպառազինության ազդեցությունը: Դրանք իրենցից ներկայացնում են սրածայր բարձր սաղավարտներ և բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի սաղավարտները ներկայացված են երկաթե մարտական սաղավարտներով, որոնք հայտնի են Կարմիր բլուրից[1]: Արևմտյան Հայաստանում գտնված երկու այլ սաղավարտները, որոնք պահվում են Մյունխենի թանգարանում տարբերվում են միմյանցից միայն սրածայր ելուստի երկարությամբ:

Բազմաթիվ գտածոներ պատրաստված են բրոնզից: Դրանք, ունենալով երկաթե սաղավարտների ձևերը, կոմպոզիցիոն տեսարաններով, ինչը հնարավորություն է տալիս վերջինները բաժանել երկու ոճական տիպի:

ԱՌԱՋԻՆ ՏԻՊԻՆ են պատկանում բրոնզե ձգված կամ ցածրիկ սաղավարտները, որոնց ճակատային մասը զարդարված է ուռուցիկ չորսժանիք նշանով: Բ. Պիոտրովսկին այստեղ տեսնում է Թեյշեբա աստծո շանթը: Նման մի քանի սաղավարտներ հայտնի են Կարմիր բլուրից և Արևմտյան Հայաստանից: Նման երկու սաղավարտ պահվում են Եվրոպական թանգարաններում, իսկ մյուս երկուսն էլ Տոկիոյի Արևելյան արվեստի թանգարանում: Առավել հետաքրքիր է հյուսիս-արևմտյան Իրանում գտնված նման սաղավարտը, որի վրա պահպանվել է Իշպուինիի արձանագրությունը: Այս գյուտը հնարավորություն է տալիս նշել, որ մ.թ.ա. 9-րդ դարում տարածված էին կատարավոր սաղավարտները:

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԻՆ են վերաբերում հարուստ կոմպոզիցիոն պատկերներով զարդարված սաղավարտները: Դրանց թիվը բավականին շատ է, իսկ տեսարանները բազմազան:

Ուրարտական արվեստի հիասքանչ նյութեր են հանդիսանում Կարմիր բլուրում[2] Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի սաղավարտները: Դրանց ճակատային մասը զարդարված է 11 կենաց ծառերի պատկերներով, որոնց

[1] **Б. Б. Пиотровский**, Ванское царство, Москва, 1959, стр. 167.
[2] **Ս. Ա Եսայան**, Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 47-48:

երկու կողմերում կանգնած են թևավոր աստվածներ՝ գլուխները զարդարված եղջերավոր գլխարկներով: Աստվածները ձախ ձեռքում պահում են փոքրիկ դույլեր, իսկ աջում՝ սրբազան ծառը: Վեց այլ ծառերի մոտ կանգնած են նման աստվածներ, որոնք ի տարբերություն վերը նկարագրվածների ունեն մորուքներ և թևեր: Բոլոր սրբազան ծառերը շրջափակված են բաց երախներով առյուծի գլուխներ ունեցող 8 օձերի պատկերներով: Սաղավարտների ծոծրակային մասերը զարդարված են 8 մարտակառքերի և 10 հեծյալների տեսարաններով: Հեծյալների և կառամարտիկների գլխներին կան նույնպիսի սաղավարտներ:

Արևմտյան Հայաստանի տարածքում վերջին տարիներին գտնված նոր նյութերը բացահայտում են ուրարտական սաղավարտների զարդարման բոլորովին նոր մոտիվներ: Այս հավաքածուները պահվում են Մայնցի, Լուվրի, Էսենի, Երուսաղեմի և աշխարհի այլ թանգարաններում: Դրանցից երեքի ճակատային մասերը զարդարված են կորագիծ իրանով օձերի երեքական պատկերներով, որոնց միջև սաղավարտի սրածայր ելուստից իջնում է մի այլ ուղղաձիգ օձի պատկեր: Բոլոր օձերի գլուխները հորիզոնական միևնույն մակարդակի վրա են: Մայնցի թանգարանում պահվող սաղավարտի ճակատային մասը զարդարված է ոչ թե երեքական, այլ մեկական օձերի նման պատկերներով:

Ավելի հարուստ զարդարված երեք այլ սաղավարտներից մեկը պահվում է Մյունխենի թանգարանում: Սրա ճակատային մասի ստորին հատվածը զարդարված է ուռուցիկ գծերից կազմված շրջանակներով, որի ներսում տեղադրված են երկու դեմ դիմաց սլացող մարտակառքերի պատկերներ: Սրանց թափքերում կանգնած են երկուական կառամարտիկներ, որոնք կրում են նույնատիպ սաղավարտներ: Կառապանը ղեկավարում է ձիերին, իսկ մյուս մարտիկը պատկերված է ձեռքերն առաջ պարզած: Սլացող ձիերի առջևից մեկը մյուսի դիմաց վազում են մեկական այծ՝ կեռ եղջյուրներով և ընդգծված խոշոր աչքերով:

Շրջանակի երկու կողմերից բարձրանում են չորսական օձեր, որոնք կորագիծ իրաններով կախված են եզրագծի վրա: Օձերի գլուխները կարճ են՝ տափակ դեմքերով և փոքրիկ կլոր աչքերով:

Մյուս՝ ոչ պակաս հետաքրքիր սաղավարտը պահվում է Լեզ-Ասկի թանգարանում: Նրա ճակատային մասը զարդարված է վերևից ներքև իջնող օձի պատկերով, որի գլուխն առյուծի է, արտահայտված դիմային պատկերագրությամբ: Երկու կողմերում պատկերված են կորաձիգ իրաններով, հակված գլուխներով երեքական օձ: Սաղավարտի ճակատային մասը՝ օձերի գլուխներից ցած, ծածկված է վարդյակներից և զիգզագներից կազմված լայն զարդադոտիով, որի ներքին տարածքը պատված է երեք

շարք կազմող սյուժետային պատկերներով: Զարդագոտուց վերև օձերի գլուխների բարձրությամբ, տեղադրված է չորրորդ շարքը: Այս վերին շարքում պատկերված են դեմ դիմաց քայլող ձկնապոչ այծեր, որոնց տակ գտնվում են նույնպես դեմ դիմաց քայլող, թևերը բացած չորսական թռչուն: Ստորին գոտիները, որոնք ընդգրկում են սաղավարտի ողջ շրջանագիծը, ունեն ավելի բարդ կոմպոզիցիա: Առաջին ծիսական կոմպոզիցիոն տեսարանը տեղադրված է սաղավարտի ճակատային մասի կենտրոնում և բաժանված է մյուսներից ուղղահայաց տեղադրված օձերի պատկերներով: Այստեղ կոմպոզիցիայի կենտրոնում պատկերված է կենաց ծառը, որի սփռված ճյուղերի ծայրերը ավարտվում են նռան պտուղներով՝ վերևում կախված է արևի թևավոր սկավառակը: Աջից և ձախից դեպի կենաց ծառն են շարժվում հնգական ֆիգուրներից կազմված շքերթի մասնակիցները: Դրանցից առաջինը, ըստ երևույթին, քուրմ է, որն աջ ձեռքին պահում է ինչ-որ երկար առարկա (միգուցե նիզակ), իսկ ձախը բարձրացրել է ողջույնի նպատակով: Նրան հետևում են աղեղները ուսերին երկու զինվոր, իսկ նրանց հետևից՝ թևավոր մարդիկ, որոնք իրենց իջեցրած ձախ ձեռքերում պահում են փոքրիկ դույլեր, իսկ աջը բարձրացրել են ողջույնի համար:

Վերջին գոտու վրա ավելի բարդ կոմպոզիցիա է պատկերված: Կենտրոնական մասին աջ՝ ամբողջ սաղավարտի շրջագծով պատկերված է շքերթի տեսարան՝ բաղկացած 13 ֆիգուրներից: Առջևից շարժվում են ողջույնի համար ձեռքերը վեր բարձրացրած երկու քուրմ, նրանց ետևից գնում են աղեղն ուսին մեկ զինվոր և երկու մարդ: Մեկը ձեռքերը բարձրացրել է վեր, իսկ մյուսը պատկերված է երկարավուն գլխարկով: Սրանց հաջորդում են չորս մարդու պատկերներ: Առաջին երկուսն ուսերին կրում են ինչ-որ բեռ, մյուս երկուսը խոշոր սափորներ: Շքերթն ավարտվում է չորս մարդկանց պատկերներով, որոնք ուսերին տանում են զոհաբերվող կենդանիներին: Այս շքերթի անդամներին, որոնք զոհաբերություն են մատուցում, կամ հարկ են բերում հանդիսավոր պայմաններում, դիմավորում են մի քանի այլ անձնավորություններ: Այստեղ՝ աջ կողմում, գլուխը հակած կորագիծ օձի պատկերի տակ կանգնած է մի մարդ, որի առջև ձեռքերը բարձրացրած յոթ քրմեր և աղեղնավորներ ողջունում են աջ կողմից դեպի իրենց շարժվող վերը նշված շքերթի մասնակիցներին: Բոլոր քրմերը և զինվորները պատկերված են երկարափեշ, իսկ բեռնակիրները կարճ, ծնկներից վերև, զգեստներով:

Վանի թագավորության արվեստի եզակի հուշարձան է Տոկիոյի թանգարանում պահվող բրոնզե սրածայր սաղավարտը: Նրա ճակատային մասը զարդարում է մի ուռուցիկ կենտրոնական ող, որը ունի փետուրի տեսք և վեր է բարձրանում սաղավարտի սրածայր ելուստից: Սաղավարտի ճակա-

տային մասը զարդարում է ցուլի խոշոր պատկերը: Այս ինքնատիպ շրջանակի մեջ տեղադրված է ծիսական կոմպոզիցիոն պատկեր: Կոմպոզիցիայի կենտրոնական ֆիգուրը մի անձնավորություն է, որի պատկերը պահպանվել է կոնքերից վերև (ոտքերը չեն պահպանվել): Նրա զրահապատ կուրծքը տրված է դիմային, իսկ գլուխը կողային դիրքով (դեմքի մանրամասնությունները չեն պահպանվել): Նա երկու ձեռքերով բռնել է թևավոր ցուլերի և փորձում է հնազանդեցնել: Դատելով կենդանիների թուլացած դիրքերից, դա լիովին հաջողվում է: Ցլագլուխ շրջանակի երկու կողմերից՝ սաղավարտի ամբողջ մակերեսով, տրված են երկու ռելիեֆ օձերի պատկերներ՝ պարզ ընդգծված աչքերով և մռութներով: Այս օձերի աջից և ձախից դեպի շրջանակն է ուղղված մեկը մյուսին հետևող ֆանտաստիկ կենդանիների մի շարք: Առջևից քայլում է երախը բաց, խիտ բաշով արու առյուծը, որի պոչը կիսակլոր բարձրացված է մեջքի վրա: Կարճ ականջները սեղմված են գլխին: Առյուծի հետևից շարժվում է խոշոր, կեռ եղջյուրներով և երկար պոչով, բերանը կիսաբաց թևավոր ցուլը: Հետևից քայլում է գիշատիչ թռչնի գլխով թևավոր առյուծը:

Ուրարտական սաղավարտները չեն սահմանափակվում վերը նկարագրվածներով: Նրանք գտնվել են ինչպես բուն Ուրարտուի տարածքում, այնպես էլ այլ երկրներում՝ Աբխազիայում, Հյուսիսային Կովկասի մի քանի հնավայրերում: Բերված օրինակները հնարավորություն են տալիս խոսել ուրարտական ձուլող վարպետների պրոֆեսիոնալ մակարդակի, ինչպես նաև ձևավորող նկարիչների բարձր ճաշակի և հնարամտության մասին:

ԶՐԱՀԱՇԱՊԻԿՆԵՐ. ուրարտական պաշտպանողական հագուստի կազմում կարևոր տեղ են հատկացվում զրահաշապիկներին[1], որոնք բաժանվում էին երկու տիպի:

ԱՌԱՋԻՆ ՏԻՊԻՆ են վերաբերում հաստ կտորից կարված կամ կաշվից գործված վերնաշապիկները, որոնց կրծքի վրա գեղեցկության և ամրության համար կարվում էին տարբեր չափերի կոճակներ, ճարմանդներ և բրոնզե թիթեղից պատրաստված սկավառակներ: Այդպիսի զրահաշապիկների մասին հետաքրքիր հաղորդում է պարունակում Սարգոն 2-րդի Մուսասիրից գրավված ավարի ցուցակը՝ ուր հիշատակվում են «9 գործվածքներ, նրա հագուստը, որի վրա կարված են ոսկյա սկավառակներ»: Կայալի դերեի պեղումների ժամանակ գտնվել են խոշոր բրոնզե սկավառակներ, որոնք նույնպես հանդիսանում են զրահաշապիկի մասեր:

Խոշոր սկավառակի բեկորներ (տրամագիծը 25 սմ), որը նույնպես հանդիսանում է զրահաշապիկի մաս, գտնվել է Գավառի շրջանի Սարուխան

[1] **Б. Б. Пиотровский**, Ванское царство, Москва, 1959, стр. 167, рис. 28.

գյուղում բացված ուրարտական դամբարանում: Հետաքրքիր են Կարմիր բլուրի նյութերը: Այստեղ գտնված խոշոր կոճակները և ճարմանդները պաշտպանում էին ոչ միայն մարտիկների զրահաշապիկները, այլև ձիերի կուրծքը՝ կարվելով իրանով անցնող կաշվե գոտիների վրա:

Ուրարտական արվեստի բացառիկ նմուշների թվին է պատկանում Լեզ-Ասկի թանգարանում պահվող զրահաշապիկի բրոնզե խոշոր սկավառակը: Նրա արտաքին մակերեսը, ինչպես վահանների վրա, զուգահեռ գծերով բաժանված են երեք գոտիների: Ցուրաքանչյուր գոտու ներսում տեղադրված են ֆանտաստիկ կենդանիների մոտիվներով զարդապատկերներ: Պատկերված են 24 գրիֆոն՝ բաժանված չորս խմբի: Վերին խմբում (աջից և ձախից) տեղադրված են՝ 1) մարդու գլխով թևավոր առյուծ, 2) խոյի գլխով թևավոր առյուծ, 3) թևավոր ցուլ, 4) թռչնի գլխով թևավոր ցուլ, 5) թևավոր առյուծ և 6) այծի գլխով թևավոր առյուծ: Ստորին երկու խմբերում փոքր ինչ տարբերությամբ տեղադրված են նույնանման ֆիգուրներ՝ 1) գլխարկը գլխին, մարդու գլխով թևավոր առյուծ, 2) գիշատիչ թռչնի գլխով թևավոր առյուծ, 3) գլխարկը գլխին մարդու գլխով թևավոր առյուծ, 4) գլխարկը գլխին մարդու գլխով թևավոր ցուլ, 5) բառաչող ցուլի գլխով թևավոր առյուծ և 6) թևավոր ցուլ: Վերին և ներքին շարքերի ֆիգուրները տարբերվում են իրենց պատկերագրությամբ: Այսպես՝ վերին երկու խմբերի թևավոր առյուծները ունեն երկար մազերով կանացի գլուխներ: Ի տարբերություն դրանց՝ ստորին երկու խմբերի առաջին և երրորդ թևավոր առյուծները կրում են գլխարկներ:

Սկավառակի կենտրոնական շրջանակում պատկերված է թևավոր մարդ՝ կանգնած ցլի վրա: Ցուլը, վերը նկարագրված կենդանիների նման, ինչպես այդ ընդունված է հին արևելյան արվեստում, պատկերված է կողային դիրքով: Ի տարբերություն դրանց, մարդու կուրծքը, 1/3 թեքված է դեպի ձախ, իսկ պատկերն ամբողջությամբ տրված է կողային դիրքով: Նա կանգնած է հանգիստ դիրքով՝ աջ ոտքը հենած կենդանու վզին, իսկ ձախը՝ մեջքին: Ձեռքերն առաջ են պարզած (աջը փոքր-ինչ բարձրացված է) ողջունելու կամ օրհնելու համար: Աջ ուսից կախված է խոշոր աղեղ: Պարզ ընդգծված են դեմքի մանրամասնությունները՝ ուղիղ քիթը, ոչ մեծ բերանը և նշաձև աչքերը, երկար մորուքը: Հագին կրում է ծնկներից վերև բաճկոն, որի փեշերը զարդարված են ծոպերով: Գլխին կրում է կլոր գլխարկ, որի կենտրոնում կա ուռուցիկ ելուստ: Գլխարկի ճակատային մասը զարդարված է եղջյուրներով, ինչը հաստատում է, որ այստեղ աստված է պատկերված: Ուրարտական պատկերագրության մեջ ընդունված է եղել ցլի վրա կանգնած պատկերել պատերազմի, փոթորկի և մրրիկի աստված Թեյշեբային: Այս տիպի զրահաշապիկների հանդես գալու թվագրության

համար կարևոր նշանակություն ունի Շվեյցարիայի թանգարանում պահվող խոշոր բրոնզե սկավառակը (տրամագիծը 24, 6 սմ): Այն զարդարված է երեք համակենտրոն շրջանակներով, որի վրա պահպանվել է Մենուայի արձանագրությունը:

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԻՆ են պատկանում թեփուկավոր զրահաշապիկները, որոնք բաժանվում են երկու տարբերակի: Առաջին տարբերակին են վերաբերում հաստ կտորից կամ կաշվից կարված վերնաշապիկները, որոնց վրա ամրացվում էին բրոնզե կամ երկաթե ուղղանկյուն թիթեղիկներ: Դրա վերին շարքի ստորին մասի կլորացող ծայրը ծածկում էր ստորին շարքի թիթեղների վերին մասը (փակելով կարի տեղերը) և նմանվում թեփուկների, որից էլ առաջացել է դրանց անվանումը:

Այսպիսի երկաթե թեփուկավոր զրահաշապիկ գտնվել է Արգիշտիխինիլիի մ.թ.ա. 8-րդ դարի շերտում[1]: Կարմիր բլուրից գտնվել են երեք այսպիսի զրահաշապիկներ: Առաջինից պահպանվել էր 172 թիթեղներ, որոնց գերակշռող մասը ուներ 3 սմ երկարություն և 1, 8 սմ լայնություն, մյուսները (13 հատ) ունեին 4, 8 սմ երկարություն և 2-2, 2 սմ լայնություն: Երկրորդից պահպանվել են 150 թեփուկներ, որոնց չափերը համընկնում են առաջինի փոքրիկ թեփուկների չափերին: Փոքր-ինչ ուրիշ չափեր ունեին երրորդ զրահաշապիկի թեփուկները, որոնց երկարությունը 3 սմ է, իսկ լայնությունը 1, 5 սմ:

Թիթեղների ձևը և տարբեր չափերը ավելի կատարելագործված զրահաշապիկ են համարվում, քան կոճակներով և սկավառակներով ամրացված առաջին տիպի զրահաշապիկները: Խոշոր թիթեղները պաշտպանում էին կուրծքը, իսկ ավելի փոքրերը մարմնի շարժունակ մասերը:

---

[1] **А. А. Мартиросян**, Аргиштихинили, Ереван, 1974, стр. 150, рис. 896 (10).